

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ—ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ

ՄԱՐԻԱՄ ԽԱՏԻՍԵԱՆ

Հայ գրականություն մէջ, որպէս Կովկասահայ առաջին և միակ վիպասանուհի, իր ուրոյն տեղն է գրաւում Մարիամ Խատիսեանը։ Կին գործչի երեւան ընդհանրապէս հասարակական և մասնաւորապէս գրական ասպարէզում ողջոյնի և խրախուսանքի արժանի պէտք է նկատուի առաւել, քան տղամարդու հրապարակ գալը, քանի որ շատ հեռուն չենք գնացել այն ժամանակաշրջանից, երբ ասիական բիրտ ու կոպիտ բարքերը զրկած էին պահում կինն արարածին մարդկային ամենատարբական իրաւունքներից, պարտաժ թանձր քողի մէջ, հեռու հասարակութեան աչքերից։ Այդպիսի մի շրջանում, բնական է, որ կինը մտածել անգամ չէր կարող հասարակական գործունէութեան մասին, ուր մնաց ազատ կերպով կարողանար զարգացնել իր ինքնուրոյնութիւնը, անհատականութիւնը և արտայայտել իր քնքոյշ, բայց և վիրաւոր հոգու տենչերն և ըղձերը։ Դեռ այժմ էլ, համարձակ կարելի է ասել, որ մարդկութեան մի աչքի ընկնող մասը հաշտուել չի կարողանում կնոջ ազատագրման ձգտման հետ և աշխատում է պարփակած պահել նրան ընտանեկան նեղ ու անձուկ պատերի մէջ։ Սակայն անհնար է այլ ևս վերականգնել նախկին դրութիւնը, նա անցել է արդէն անվերադարձ կերպով։ Պատմութիւնն ունի իր անողոք օրէնքները, արդիւնաբերական կարգերի փոփոխուելու հետ փոփոխում են նաև հասարակական յարաբերութիւնները, մարդկանց նիստ ու կացը, սովորոյթները, մտածելակերպն ու հոգեբանութիւնը։ Հանդէս են դալիս յարաբերութեանց նոր ձևեր, նոր ըմբռնումներ մարդու անհատի, անհատական ազատութեան մասին։ Դոյութեան անողոք կռիւն ընտանեկան յարկի տակից հրապարակ է նետում հազարաւոր քնքոյշ ու ջղուտ ձեռքեր, ստիպում է նրանց տղամարդու հետ համահաւասար կռիւ մղել բնութեան դէմ, ճաշակել կեանքի դառնութիւնները, նրա չարն ու բարին։ Կինը հանդէս է գալիս այդ կռուի, աշխատանքի մէջ որպէս մարդ, որպէս ինքնուրոյն անհատ և սեփական ուժով դարբնում իր ապագան, իր ճակատագիրը։ Ժամանակի ընթացքում նա ևս ճգնում է գրաւել, գոնէ մասամբ, գործունէութեան այն բոլոր ասպարէզները, որոնք մինչ այդ տղամարդու մենաշնորհն էին համարւում։ Երևան են գալիս կին գործիչներ—բանուորուհիներ, ուսուցչուհիներ, բժշկուհիներ, զանազան հիմնարկու-

թիւններում ծառայողներ, գրողներ, դեղարուեստագէտներ ևլն ևլն:

Նոյն երեոյթն է նկատուում նաև մեզնում, քանի որ մեր կեանքն էլ, որպէս ընդհանուրի մի կտորը, մի մասը, ենթակայ է պատմութեան նոյն օրէնքներին, տարբերութիւնը ժամանակի, տարածութեան և մասամբ էլ որակի մէջ է: Եւրոպայում գոյութիւն ունեցող դասակարգերը նկատելի են նաև մեր մէջ, այն շերտաւորումը, որ պարզ ու որոշ նկատելի է այնտեղ, առաջանում է նաև մեզնում, միայն աւելի դանդաղ, յամրընթաց՝ համապատասխան մեր երկրի տնտեսական զարգացման: Զխտացած, ներքին և արտաքին կապերից զուրկ, կանոնաւոր չկազմակերպուած դասակարգերը ծնունդ են տալիս համապատասխան աննշան իդէօլոգիաների, աղքատիկ կեանքը ծնում է քանակով և որակով աղքատ հասարակական գործիչներ, որոնց ծնունդը լինում է դժուար, կեանքն ու գործունէութիւնը ևս առաւել, քանի որ բացակայում են այն յարմարութիւնները, որ կան մեծ և քաղաքակիրթ ազգերի մէջ: Հէնց այդ տեսակէտից մեզ նման փոքր ազգերի հասարակական գործիչները արժանի պէտք է համարուեն առանձին յարգանքի և խրախուսանքի, ևս առաւել կին գործիչները, որոնց ճանապարհի վրայից դեռ չեն վտարուած այն խոշ ու խութերը, որոնք կոշմարի պէս ծանրանում են նրանց վրայ, կաշկանդում նրանց մտքի ազատ թռիչքը և հոգու ումն ու թափը:

Այսպիսի աննպաստ հանգամանքների և աղքատիկ կեանքի ծնունդ է և կովկասահայ առաջին վիպասանուհի Մարիամ Սատիսեանը (նորերս վախճանուած), որը տուել է մեզ չորս վէպ, Մ. Մարիսեան կեղծանուամբ.— «Հեղինէ», «Նոր ճանապարհի վրայ», «Փեսայ որսողներ» և «Դժբախտ կին»: Այս վէպերը նախ գրուել են ռուսերէն և յետոյ թարգմանուել հայերէն. մի բան, որ կարող է բաւական ֆուսել երկի գեղարուեստական արժանիքին: Ձեռքի տակ չունենալով «Հեղինէ» վէպն, ստիպուած ենք բաւականանալ միւս երեք վէպերով, որոշելու Սատիսեանի կատարած գերը հայ գրականութեան մէջ:

Որքան էլ թոյլ լինեն Սատիսեանի վէպերը գեղարուեստական տեսակէտից, որչափ էլ անարուեստ և արհեստական հիւսուածքներով և միտումաւոր, այնուամենայնիւ ունին բաւական խոշոր արժէք. 80—90-ական թուերի հայ կեանքն է խօսում այդ վէպերի մէջ, հայ ժողովրդի բաղդը—միջին խաւերն են հանդէս գալիս այդտեղ իրենց հայեացքներով, հասկացողութիւններով և հոգեբանութեամբ: Մի հանգամանք, մանաւանդ, որ Սատիսեանը քաջ ծանօթ էր թիֆլիսի սակաւաթիւ հայ արխիտոկրատ ընտա-

ներքներին և բուրժուա դասակարգին, աւելի ևս բարձրացնում է այդ գրուածքների արժանիքը: Սակայն էլ աւելի արժեքաւոր կը լինէին այդ հեղինակութիւնները, եթէ վիպասանուհին ներկայացներ մեզ տիպերն աւելի հարազատօրէն, չլուռաւորէր, չխտացնէր յանուն իր նպատակի, միտումի: Իսկ հեղինակի միտումն զգալ է տալիս իրեն ամեն քայլափոխում,—կռիւ ընդդէմ ծագումով ու հասարակական դիրքով պարծեցող արիստոկրատիայի և կռիւ յանուն կնոջ ազատութեան, ինքնաբերութեան և անկախութեան:

Ազնուականութիւնը հայերիս մէջ դեռ շատ առաջ, շնորհիւ զանազան արտաքին հանգամանքների, կորցրել էր իր ուժը և որպէս առանձին դասակարգ գոյութիւն չունէր. կային հատ ու կէնտ կալուածատէր և կալուածազուրկ ազնուականներ, որոնք արմատ էին ձգել օտար հողի մէջ, օտար երկնքի տակ և կառավարում էին իշխող ազգի օրէնքներով, կարգ ու կանոններով: Ճորտատիրութեան վերապետով նրանք կորցրել էին իրենց յինակէտը: Իսկ երբ քաղաքներում ուժեղացաւ, զարգացաւ վաճառականութիւնն ու արդիւնաբերութիւնը, ուրիմն և բուրժուազիան ձեռք բերեց տնտեսական գերիշխանութիւն, ազնուականութիւնը կորցրեց միանգամայն իր գոյութեան իմաստն, իրաւունքը: Բայց նա իր անկման մէջ էլ դեռ ձիւղ էր թափում պահել իր առաջուան արտօնութիւնները, ապրել առաջուան շքեղութեամբ և փարթամութեամբ և շարունակում էր արհամարհանքով նայել ուժեղացող «տարգաշկաներին», բուրժուազիային: Հարազատ ժողովրդի ծոցում նա իր համար ոչ տեղ և ոչ էլ գործ էր գտնում. խորթ էր նրա համար այդ շրջանը, ազգային ծագումը խաւարում էր դասակարգային ծագման ստուերի տակ: Նա իր համար տեղ էր որոնում օտար շրջանում, ձգտում էր յարաբերութիւն ստեղծել օտար իշխանական, չինովնիկական շրջանների հետ, գործելու ասպարէզ էր որոնում հէնց այդ շրջաններում, թէկուզ այդ գործը, պաշտօնը նիւթական շահ չբերէր, չվարձատրուէր: Սակայն նորին բարձրութիւններին ու վսեմափայլութիւններին հետ կապ պահպանելու համար անհրաժեշտ էր նիւթականը, փողը, որից զրկուել և զրկւում էր հետզհետէ հայ ազնուականութիւնը. ստեղծւում էր մի տեսակ կեղծ դրութիւն, որը չէր կարող յարատեւ լինել և վաղ թէ ուշ հայ արիստոկրատը պէտք է իր անապագայի արտադրութիւն հանդերձ գլուխ խոնարհէր բուրժուայի յաղթական դրօշակի առջև: Ահա այդ կեղծ դրութիւնն է աշխատում հրապարակել իմաստեսանն իր վէպերի մէջ, ջնջել ջանալով այն հմայքը, որը դեռ ևս շարունակում էր ունենալ հայ ազնուականը, շնորհիւ արտաքին վայելուչ ձևերի, հասարակական դիրքի և ծագումի, ժողովրդի մի որոշ մասի մէջ:

Կատերինա Բազրուհին («Նոր ճանապարհի վրայ») հաշ-

տուեւել չի կարողանում նոր կարգերի հետ նա տրանջում, բողոքում է այդ կարգերի, և՛ ամուսնութեան ձևի, և՛ ընտանեկան նիստ ու կացի, և՛ ծնողների ու զաւակների յարաբերութեան դէմ. նրան զայրացնում է մանաւանդ ճորտութեան վերացումը, որը, նրա կարծիքով, մի սոսկալի դժբախտութիւն է հէնց գիւղացիների համար, որովհետեւ դրանով աղարտւում է նրանց բարոյականութիւնը. «Ծորտութեան վերջանալովը, ասում է նա, գիւղացին միանգամայն ճամբից դուրս եկաւ: Յիշում եմ, երբ ողորմած հողի ամուսինն բղաւում էր գիւղացիների վրայ, նրանք կիսամեռ կանգնում էին տեղներումը. իսկ այժմ, տեսէք, ինչքան են լրբացել»: Կալուածատէր ասնուկանի հոգեբանութիւն... Ամեն մի դասակարգ, առհասարակ, երբ իր ոտքի տակ հող է ունենում, զրուութեան տէրն է լինում, երբէք չի դժգոհում արող կարգ ու կանոնից. ընդհակառակը աշխատում է պահպանել և պաշտպանել. եղածը, հինը, կանգունը. հէնց այդ պատճառով էլ ներկայանում է գերազանցապէս պահպանողական տարր: Դժգոհելու ասիթ են ունենում այն դասակարգերը, որոնք կամ իրենց ուժից, իշխող դրութիւնից են զրկուել, կամ դեռ նոր են ցանկանում օժի, իշխող դրութեան տէր դառնալ: Առաջինները, շարունակելով մնալ պահպանողական, բաւականանում են խուլ բողոքներով, անզոր տրտուներով ու անատամ բարբառանքներով, վերջինները, որոնք նոր են ձգտում տեղ գրաւել սոցիալ-տնտեսական կեանքում, ներկայանում են որպէս կռուող, քննադատող, յարձակումներ գործող տարր, հետևաբար գերազանցապէս ազատամիտ:

Ծիշտ է, Բագրունիները բողոքում, դժգոհում են, զրա մէջ գանկելով իրենց արխատկրատիկ վեհութիւնը, իրենց արհամարհանքը դէպի բուրժուազիան, որովհետեւ բախաւ նրանց գլուխը է բուրժուազիայի ծոցը և այդտեղ էլ դտել են նրանք իրենց հանգրուանը: Հաշտութիւնը արող դասակարգի և նրանից ծնունդ առած նոր կարգերի հետ մի քանի տարիների խնդիր է Բագրունիների համար: Այդ տեսակէտից բոլորովին այլ պայմանների մէջ են իշխանուհի և իշխան Ատունիները («Դժբախտ կին»): Գերեզմանի հետ հաշտուելը նրանց համար աւելի դուրին է, ցանկալի, քան հաշտութիւնը իրենցից ցած կանգնած դասակարգերի հետ: Արխատկրատ շրջանի հակումներով սնուած ու մեծացած, գոռոզ իրենց ծագումով, տոգորւած դասակարգային նախապաշարմունքներով, նրանք արհամարհում են այն ամենը, ինչ որ արխատկրատական չէ. խօսել անգամ չեն ցանկանում զանազան վարժուհիների, «տարգաշկաների», «կլինաօ-միւստիների» հետ: Նրանց միտքնած ուղեղները համար անհասկանալի է մնում առետրա-արդիւնաբերութեան ուժն ու զօրութիւնը, կեանքի առաջընթացութիւնը և նրանք շա-

բունակում են մնալ արդէն իսկ մահուան դատապարտուած կեղծ ու պատիր մթնոլորտում: Նիւթական պակասը միայն նրանց զգացնել է տալիս «տարգաշկաների» գոյութիւնը, առաջ է դալիս մի դիւեմմա—հրաժարուել բարձր շրջանի հետ յարաբերութիւն ունենալուց, շալլ, անաշխատ կեանքից, ասել է թէ արիստոկրատ լինելուց, կամ թոյլ տալ մի փոքրիկ դաւաճանութիւն ընդդէմ արիստոկրատական տրադիցիաների, ընդդէմ «ազնիւ» անուան և արեան՝ մեծ օժիտով հարս բերել տուն «տարգաշկաների» շրջանից, և նրանք ի հարկէ, ընտրում են վերջինը: Իշխան Ատունին բարեհաճում է վեհանձնաբար խնդրել մի հարուստ կապալառուի աղջկայ—Մանիայի ձեռքը: Այլ ճանապարհ գոյութիւն չունէր, այդ էր նրանց փրկութեան միակ խարխիւլը, այդ էր պահանջում Ատունիների իշխանական տան պատիւը: Իշխանի բախտից Մանիան գտնուում էր մի այնպիսի կնոջ ազդեցութեան տակ, որը պատրաստ էր ամեն զոհաբերութեան, միայն թէ արժանի համարուէր կոխելու իշխանական տների յատակը: Ամեն ինչ խոստանում էր յաջողութիւն. իշխանը շողորթութիւն խօսքերով ու անիրազործելի խոստումներով շշմեցնում է Մանիային և իր ապագայ զոքանչից, որպէս կանխավճար, զջլում է 30,000 ուռլի իր «հին մեղքերը» ծածկելու համար, և այդ գումարը նա կորզում է այնպիսի ստոր սակարկութեամբ, որ «ոչ մի գործակատար թոյլ չէր տայ իրեն»: Անարգ մետաղի դիմաց բոլակապէս կանգ է առնում աղքատ ու հպարտ աղնուականի ազնիւ արեան շրջանառութիւնը, նա մոռանում է մի առժամանակ իւր ծագումը, իր դիրքը և արհամարհանքը դէպի փողատէրը, թէկուզ վերջինս լինի ամենացած խաւից, ամենաստոր չարչին: Փողի խնդիրը վերջանալուն պէս նորից իշխանի երակներում հոսել է սկսում ազնիւ արիւնը, նորից նրա մէջ գլուխ է բարձրացնում իշխանական արհամարհոտ ոգին: Նա իր դիրքին անհամապատասխան է գտնում կնոջ ազգականների հարսանեաց հանդէսին ներկայ գտնուելը և պատրուակ բերելով, թէ նորին բարձրութիւն պրինց Ն-ին հարսանիք հրաւիրելն անխուսափելի է, համոզում է կնոջը, որ «էտիկէտը պահանջում է, անտիտոգոսաւոր անձինք ներկայ չլինեն հարսանիքին»: Արհամարհանքը դէպի կնոջ մայրը, հարազատներն ու ազգականները էլ աւելի խտանում, բազմապատկւում է, երբ իշխանը վարպետ դերասանութեամբ կարողանում է իւրացնել կնոջ 200,000 ուռլի օժիտը: Ատունիների իշխանական տան դռները փակւում են Մանիայի ամենամտերիմների առջև և խեղճ կինն ստիպուած է լինում կամաւոր բանտարկեալի կեանք վարել. եթէ երբեմն էլ ըրսկ է անում գաղտնի տեսակցել իր հարազատների հետ, ծ, այդ դէպքում մայր և որդի շանթ ու որոտի տարափի տակ հալում—մա-

շում են նրան. «Ի՞նչ կասեն մարդիկ տեսնելով քեզ մի որևէ ուսուցչուհու կամ դերձակուհու նման ցեխոտ փողոցներում քաշ գալիս, Ձեր մաքում պինդ գրոշմէք, թէ ինչ կոշման տէր էք և ինչ դասակարգի էք պատկանում այժմ», ասում է իշխանը Մանիրային:

Թւում է, թէ ծագումով ու դիրքով հպարտացող ազնուականն ասում է այդ բոլորը յանուն իր տան, իւր կնոջ պատուի. բայց այդ միայն թւում է. «Կնոջ արժանիքն այդ շրջանում չափւում է նրա երկրպագուների քանակով». իսկ Մանիրան այդ կողմից շատ դժբախտ էր, ուրեմն և զուրկ արժանիքից, նոյն իսկ իր հարազատ ամուսնու աչքում: Հէնց այդ պատճառով էլ իշխանը կապ պահպանելով ուրիշ հետաքրքիր կանանց հետ բարձր շրջանից, ոչ միայն աչքաթող է անում իր կնոջը, այլ և արհամարհում, վիրաւորում նրան ամեն քայլափոխում, վիրաւորում նրա եսը, նրա անհատականութիւնը, նրա զգացմունքները, վարւում է նրա հետ աշխարհի գոհիկի, տմարդի ձևով, ինչպիսին թոյլ չէր տայ իրեն հասարակ ածխավաճառը: Դրութիւնը փոխում է Մանիրայի յղութեան պատճառով. իշխանն ու իշխանուհին փոխում են իրենց վերաբերմունքը դէպի Մանիրան, սկսում են աւելի ջերմ, քնքոյշ և սիրալիր վարուել նրա հետ: Կարիք չկայ ասելու, որ այդ քնքշութեան ու սիրալիրութեան տակ թաղնուած կը լինէր անշուշտ մի ստոր, գծուծ հաշիւ. Մանիրայի մօր ստացուածքն ամբողջովին պիտ անցնէր Մանիրայի որդուն և իշխանը միտք ունէր կողոպտել հարազատ որդուն, ինչպէս կողոպտեց կնոջը, և այդ բոլորը նրա համար, որ հաստատուն պահէին իրենց իշխանական, հասարակական դիրքը, շարունակէին աշխարհային շուքն ու փայլը: Սակայն «որքան ցեխ է ծածկուած աշխարհային շուք ու փայլի տակ... նրանք (մայր ու որդի) պատրաստ են իրենց եսասիրական նպատակներին հասնելու համար ոտնակոխ անել ինչ որ սուրբ է, ինչ որ մաքուր է» ասում է դառնացած Մանիրան: Վերջապէս կատարւում է Ատունիների բաղձանքը. աշխարհ է գալիս նորածինը: Ինչպէ՞ս է դողդողում իշխանուհին իւր սիրասուն թուսիկի վրայ. թոյլ չի տալիս մինչև անգամ Մանիրային իր կաթով կերակրելու գաւակին (ասենք այդ դէպ էլ էր իշխանի հասարակական դիրքին), չի թողնում նոյն իսկ երեխային տանն մօր Մանիրայի մօտ. իսկ երբ պարզամիտ ծծմայրը, որի մէջ խզճի ու բնութեան ձայնը դեռ չէր ենթարկուել արիստոկրատական ապականութեան, ծածուկ տանում է երեխային Մանիրայի մօտ, իշխանուհին կատաղում է և կարկառի նման փողոցային հայհոյանքներ թափում ծծմօր գլխին: Չէ՞ որ կարող էր յանկարծ որևէ դժբախտութիւն պատահել. ինչպէ՞ս կարող էր ապրել իշխանուհին առանց

Թոռնիկի. և իսկապէս, նա տանել չէր կարող Թոռնիկի բացա-
կայութիւնը, ուստի ծածուկ կարգադրել էր, որ եթէ մի անբախ-
տութիւն պատահի, Թոռնիկը մեռնի, նրան փոխարինեն ուրիշ
Թոռնիկով: Այդպէս էր պահանջում իշխանի հասարակական դիր-
քը, արխատկրատական էտիկէտը...

Կասկած չկայ, որ հեղինակը խտացրել, դուռնաւորել է, լայց
եթէ կէսն իսկ ընդունելու լինինք ճշմարիտ, միանգամայն կը հա-
մաձայնենք Մանիայի հետ, որ այն, իշխանական արտաքին շուք
ու փայլի, վայելուչ ձևերի տակ թաղնուած են այնպիսի կեղտ ու
ցեխ, որոց մասին նրանցից արհամարհուած հասարակ ժողովուրդը
հասկացողութիւն անգամ չունի:

Երեխայի աշխարհ գալու հետ միասին նորից հրապարակ են
գալիս մօր ու որդու արհամարհանքն ու ատելութիւնը, ծաղրն ու
ժանալը դէպի Մանիան: Իշխանն առիթ չի փախցնում վիրաւո-
րելու, խայթելու իր կնոջը, ծաղրում է նրա նիհարութիւնը, զէմքի
դուռնաւորութիւնը, աչքերի տակի կապուտակները. անուանում է
նրան զափռան, քոնձոտ ձի և վերջապէս ապտակում է նրան,
հրում վայր ձգում... Իսկ իշխանուհին այնքան է ստորացնում
Մանիային, որ նոյն իսկ ծառաներն էլ ծաղրով և արհամարհանքով
են վերաբերում դէպի նա:

Ահա թէ ինչպիսի գոհարներ է ցուցադրում մեզ հեղինակը
արխատկրատական շրջանից. աշխարհի աչքից հեռու, պատերի
մէջ թաղնուած որպիսի յարաբերութիւններ է լոյս աշխարհ հա-
նում: Այսպէս են Ատոռնիները, Աղբաթոնիները («Փեսայ որսողներ») և
առհասարակ ղեկից ու խարսից զրկուած հայ սուերային աղ-
նուականութիւնը, որին մի աւելորդ հարուած էլ հասցնում է
բուրժուազիայի ծոցից ելած և բուրժուա ինտելիգենցիայի հասա-
րակական-սոցիալական բնագոյները քաջալիքով ու ջատագովող
Մարիամ Խատիսեանը:

Կեղծիքների և սնափառութեան մէջ մինչև կոկորդ խաւած
աղնուականութիւնը. բնական է, որ իր զուակները կրթութեան—
դաստիարակութեան խնդրում առաջնորդուէր կեանքի մասին ու-
նեցած սեփական հասկացողութիւններով, բմբռնումներով: Տե-
սանք, որ կնոջ արժանիքն արխատկրատ շրջանում չափւում է նրա
երկրպագուների քանակով. հետևապէս կրթութիւնն ու դաստիա-
րակութիւնն էլ ոչեւք է տարուէր այնպիսի ճանապարհով, որ աղ-
նուազարմ օրիորդն ու երիտասարդը իւրացնի կարողանային այն
բոլոր միջոցներն ու ձևերը, որոնցով համարձակ կարողանային
տեղ բռնել բարձր շրջանում, ուշադրութիւն գրաւել իրենց ար-

տաքին վայելուչ ձևերով, խօսակցութեան եղանակով, ընդունակ լինէին երկրպագուներ ձեռք բերել։ Դրա համար նրանք պէտք է տեղեակ լինէին անհրաժեշտօրէն ֆրանսերէն, ռուսերէն լեզուներին, դաշնամուր նուագելուն, կարողանային նկարել ասլասի, ձենապակու վրայ, պարել, կոմպլիմենտներ շնայել։ Ծնողներն անկարող էին զբաղուել իրենց երեխաների կրթութեամբ— դաստիարակութեամբ. նախ որ այդ ընդունուած չէր, անյարմար էր իրենց ծագմանն ու հասարակական դիրքին և երկրորդ՝ ժամանակ էլ չունէին. հիւրասիրելն ու հիւրասիրուելը, ղրօտանքներն ու դատարկ ժամանցները խլում էին նրանց ողջ ժամանակը։ Պէտք էր ուրեմն դիմել օտար դաստիարակչուհիներին, մանաւանդ որ օտար լեզուի գերագանց պահանջը կար, յաճախ կիսակիրթ ֆրանսուհի, լեհուհի և այլն գումբերնատկաների։ Իսկ թէ որքան յուսալի էին դրանք և որքան կրթիչ նրանց օրինակը, այդ մասին թող խօսի Սօնիան («Փեսայ որսողներ»)։ «Մենք (Սօնիան և գումբերնատկան) միասին լողացնում և կերակրում էինք նրա (գումբերնատկայի) շնիկներին։ այնուհետև զբաղուած էինք կատուններով և աղանձիներով... Մի ուրիշը, որ պոռաւ լեհուհի էր, միշտ քսւում ու զարդարւում էր և անդադար հայելիին էր մտիկ տալիս։ Պարապելով ինձ հետ օրական ընդամենը կէս ժամ, այն էլ միայն ձեռի համար, նա իսկոյն տանում էր ինձ հիւրասենեակ և օրուայ մեծ մասը պահում էր ինձ պնտեղ, ասելով, որ աղջկիկը փոքր հասակից պէտք է ստանայ աշխարհային փայլ, ապա թէ ոչ՝ յետոյ դժուար է սովորել։ Կենդանաբանական թանգարանի համար միայն կարող էին նրանք (այդ գումբերնատկաները) օլէտք գալ և ուրիշ ոչինչ։ Նրանք զբաղւում էին ամեն բանով, բացի իմ դաստիարակութիւնից։ Ծնողներին խաբում էին, ասելով, որ ես անսովոր ընդունակութիւն և յառաջագիմութիւն եմ ցոյց տալիս թէ լեզուների և թէ գիտութիւնների մէջ... Իմ վերջին գումբերնատկան մի սիրունատես և վերին ատրիճանի սիրահարուող կին էր. նա երեւակայում էր, որ ըզըր տղամարդիկ իր գեղեցկութեան վրայ խելքից գնում են։ Երբէք չեմ մոռանալ, թէ ինչ հետաքրքրութեամբ ականջ էի դնում ես նրա լիտի պատմութիւններին... Բայց ամենից աւելի ծիծաղելի էին մեր ղրօտանքները ճաշերից յետոյ։ Գումբերնատկան կաշառելով ինձ զանազան քաղցրաւնիներով, մտնում էր իր սիրականներից մէկի կամ միւսի մօտ, թողնելով ինձ բակումը։ Մի անգամ հետաքրքրութիւնից զրդուած, ես պատուհանից ներս նայեցի և տեսայ mademoiselle-ին իր սիրականի գրկում»։

Թոյլ տուեցի ինձ արտազրել այս երկար պարբերութիւնը, որովհետև նախ որ դժուար է սրանից աւելի ցայտուն կերպով

Նկարագրել տոյն օտար՝ գուլբերնանտկաների վարքն ու բարքը, դաստիարակչական ձևերն և եղանակները, որոնք գրկարաց ընդունում էին արխատակրատ ընտանիքներում իբրև դաստիարակչուհի և ղեկավարում երեխաների նախադպրոցական կրթութիւնն ու դաստիարակութիւնը՝ երկրորդ՝ որ այդ օտար կիսակիրթ, թիթե բարոյականութեան տէր գուլբերնանտկաները գեռ ևս շարունակում են տեղ-տեղ իրենց հմայները հայ բուրժուա ընտանիքներում:

Հասկանալի է, որ նման ղեկավարների ազդեցութեան տակ պէտք է փչանային, ապականուէին երեխաների վարքն ու բարքը, իսկ քանի որ արխատակրատիայի սիրած օրիորդաց ինստիտուտն հակազդելու ոչ մի հնարաւորութիւն չուներ, ուստի հէնց այդպէս սանձարձակ և ալլասեռուած ձևով էլ շարունակուում էր նրանց դպրոցական կրթութիւնը: «Ծիծաղս հիմա էլ գալիս է, ասում է օր. Սոնիան, երբ մտաբերում եմ, թէ ինչպիսի անճոռնիների վրայ էինք սիրահարում (ինստիտուտում): Լաւ էր, եթէ բաւականանայինք միայն ուսուցիչներով. բայց մեր սիրահարութիւնը տարածւում էր նաև տիրացուների և զոնապանների վրայ»: Էլ ի՞նչ պահանջէր այդպիսի յոռի դաստիարակութիւն ստացած, փչացած և ապականուած բնաւորութեամբ կեանքի շէմքը կոխող գեռատի օրիորդներից: Նստարաններից դեռ չազատուած, նրանք տենչում են ծծել աշխարհային հաճոյքն ու վայելքը և ինստիտուտի դռնից ելած-չելած, մի մտածմունք միայն զբաղեցնում է նրանց ուղիղը. ամուսնանալ, իշխանուհի դառնալ. «Ի՞նչ աւելի մեծ բախտաւորութիւն կարող է լինել, քան թէ կրել իշխանուհու տիտղոս»: Նրանց մեծ հաճոյք է պատճառում հէնց այն միտքը, որ հիւր գնալիս՝ ծառան կը յայտնի տանտիրոջը, թէ իշխանուհին եկաւ: «Իսկ madame princesse-այդ աւելի ևս քաղցր է հնչում»: Լեյսպիսի իդէալ փայփայող աղնուաղարմ օրիորդը պէտք է կեանք մտնի և մայր դառնայ. իսկ թէ այնուհետև ինչպիսի կեանք կը վարի, պարզ է. կամքից ու բնաւորութիւնից զուրկ, պարահանդէսների, զարդ ու զարդարանքի, ժուր-ֆիբանների ցաւով բռնուած, նա՛ պէտք է սպանի իր ժամանակը, իր մատաղ կեանքը, ոտով-գլխով անձնատուր եղած սին գուարճութիւնների ու ֆլիրտների:

(Նարունակի)

Հ. Յովակիմեան.

